<<ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N135

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գնահատումը, գնահատման տեսակները, գնահատման գործիքները տարրական դասարաններում

Ուսուցիչ՝ Մովսես Խորենացու անվան համար 143 հիմն դպրոց, Ավդալյան Հերմինե Վահանի

Խումբ՝

Վերապատրաստող՝

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……
…..3
Գլուխ 1. Գնահատումը որպես գիտելիքների
ստուգման
մեթոդ…….5
Գլուխ 2. Գիտելիքների ստուգման և գնահատման
ժամանակակից տեխնոլոգիաները և
տեսակները……...9
Գլուխ 3. Գնահատման գործիքները տարրական
դասարաններում……..
.12
Եզրակացություն……
…16
Օգտագործված գրականության
ցանկ……..……16

135

Ներածություն

Գնահատման խնդիրը իր տարբեր ասպեկտներում արտացոլում է գտել տարբեր հոգեբանների, մանկավարժների և մեթոդիստների աշխատանքներում /Բ.Գ. Անանիեվ, Յու.Կ. Բաբանսկի, Լ. Ի. Բոժովիչ, Դ. Բ. Էլկոնին/: Ապացուցված է, որ դպրոցականների ինքնագնահատականի նկատմամբ մեծ ազդեցություն ունի ուսուցչի գնահատման գործունեությունը: Մինչդեռ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է իրականացվում տվյալ ազդեցությունը: Տվյալ թեման արդիական է նաև նրանով, որ ուսուցման որակի բարձրացման պայքարը և գիտելիքների յուրացումը շարունակում է մնալ կարևոր խնդիր նաև այսօր:

Գնահատման խնդրի ակտուալությունը կապված է վերջին ժամանակներս ձեռք բերված հաջողությունների հետ՝ ուսուցման գործնական դերի իրականացման առումով, որի շնորհիվ լայնացել է գնահատման բնագավառը, աճել են ուսումնամանկավարժական պրոցեսի նկատմամբ դրական ազդեցության հնարավորությունները, պայմաններ են ստեղծվել գնահատման ռացիոնալացման համար:

Տվյալ աշխատանքի նպատակն է բացահայտել ուսուցման ստուգման համակարգի նկատմամբ մոտեցումը և առանձնացնել նրա իրականացման հիմնական միջոցները, արտահայտել մանկավարժական գնահատման ազդեցության առանձնահատկությունները սովորողների ինքնագնահատականի նկատմամբ:

Նշված նպատակի ձեռքբերման համար պահանջվել է հետևյալ խնդիրների լուծումը.

1. Հասկացություն տալ դպրոցականների գնահատմանը և ինքնագնահատմանը;
2. Սահմանել մանկավարժական գնահատման զարգացման պատմությունը,

3. Սահմանել դպրոցական գնահատման հիմնական տեսակները,
4. Ընտրել դպրոցականների ինքնագնահատման հետազոտության մեթոդիկա:

Խնդիրները

● գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները,

● գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

● ձևավորող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,

● խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը, նպաստել նրա անձնային որակների և դիրքորոշումների ձևավորմանը,բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հուսալիության, հավաստիության, մատչելիության, օբյեկտիվության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Գլուխ 1. Գնահատումը որպես գիտելիքների ստուգման մեթոդ

Սովորողների գիտելիքների, կարողությունների վերահսկումը, գնահատումը դիագնոստիկայի մեջ ընդգրկվում են որպես բաղկացուցիչ մասեր: Դրանք մանկավարժական տեխնոլոգիայի շատ հին բաղադրիչներ են: Առաջանալով քաղաքականության արևածագին, վերահսկումն ու գնահատումը համարվում են դպրոցի անփոխարինելի արբանյակներ, ուղեկցում են նրա զարգացմանը: Այնուամենայնիվ, մինչ օրս առկա են բազում վիճաբանություններ գնահատման իմաստի, նրա տեխնոլոգիայի վերաբերյալ:

Դպրոցական գնահատման հակասական բնույթ նշել է Յա. Ա. Կոմենսկին, մանկավարժներին դիմելով տրամաբանորեն կիրառել գնահատման իրենց իրավունքը:

Ստուգման ժամանակակից ձևերը խստորեն քննադատել է Կ. Դ. Ուշինսկին, բնութագրելով դրա թերությունները, ընդգծել է նախ և առաջ այն, որ առկա մոտեցումներն ու միջոցները ճնշում են սովորողների մտավոր գործունեությանը: Մտավոր դաստիարակության նպատակն է նպաստել մարդու զարգացմանը, որը տարբերվում է իր խելացիությամբ, ինքնուրույնությամբ, սիրով և այլն: Հարկավոր է հիշել, որ չի կարելի երեխային մարդ սարքել, այլ կարելի է դրան նպաստել և չխանգարել, որպեսզի նա անձամբ իր մեջ մշակի մարդու: Անհրաժեշտ է, որպեսզի նա մշակի գաղափարային մարդու և ձգտի կյանքում ղեկավարվել այդ իդեալով: Մեր երկրում մեծ տեղ է տրվում մտավոր գործողությանը, որովհետև այն հիմք է հանդիսանում մարդու բազմակողմանի զարգացմանը: Այն նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը[1]:

Ուսուցման արդյունավետության կախվածությունը ստուգման քանակից, որակից, ամբողջությունից, խորությունից, օբյեկտիվությունից՝ դիդակտիկ պրոցեսի

[1] Անտրոպովա Մ. Վ. Մանկավարժություն: Մ., 2008թ.

ընդհանուր օրինաչափությունն է: Ստուգումը սովորողների կարողությունների, գիտելիքների արտահայտումը, չափումն ու գնահատումն է:

Գիտելիքների և կարողությունների գնահատումը դիդակտիկայում ուսումնասիրվում է որպես սովորողների տեսական և գործնական պատրաստվածության քանակական և որաական ցուցանիշների սահմանման գործընթաց:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ,

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական աշխատանք,

6) նախագծային աշխատանք և այլն:

Յուրաքանչյուր թեմայի ուսուցման ավարտին տրվում է ամփոփիչ աշխատանք, որի նպատակն է՝ պարզել, թե սովորողը որքանով է յուրացրել ուսումնական նյութը: Ամփոփիչ աշխատանքը կարող է իրականացվել ամփոփիչ գնահատման վերոնշյալ ձևերով:

Թեմայի ամփոփման գրավոր աշխատանքի հաճախակի կիրառվող ձևերից է թեստը, որը հնարավորություն է տալիս միաժամանակ ստուգել բոլոր սովորողների՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը: Թեստը կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի համախմբի:

Հետևաբար, նախ պետք է առանձնացնել այն վերջնարդյունքները, որոնց իրականացման մակարդակը ստուգվելու է տվյալ թեստով, այնուհետև սահմանել հատկորոշիչներ թեստի համար՝ առաջադրանքների քանակ և տեսակ, կատարման ժամանակ, գնահատման սադղակ և այլն, նոր արդեն կազմել թեստը:

Թեստային աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց

յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Առաջադրանքները կարող են տրվել հարցարաններով, որոնցում ներառվում են տարաբնույթ առաջադրանքներ, դրանցից են.

- ճիշտ պատասխանի ընտրության,
- համապատասխանեցման,
- լրացման,
- կարճ պատասխանով,
- ընդարձակ պատասխանով,
- ստեղծագործական և այլն:

Թեստի միջոցով բացի սովորողի գիտելիքից և հմտություններից, հնարավոր է ստուգել նաև արժեքային համակարգը և վերաբերմունքը՝ կախված ուսումնասիրվող առարկայի և ուսուցանվող թեմայի առանձնահատկություններից:

Թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են, այսպես կոչված, թեստի «նախագիծը», որոշում են թեստի կառուցվածքն ու բովանդակությունը: Դրանք են՝

- Դասարանը
- Թեման կամ թեմանները
- Նպատակը
- Ստուգվող վերջնարդյունքները
- Առաջադրանքների տիպը
- Հարցերի քանակը
- Հատկացվող ժամանակը
- Առաջադրանքին տրվող միավորը

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել հատկորոշիչներին համապատասխան բազմաթիվ թեստեր:

Թեստը կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք սկզբունքներ: Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի

տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները: Հուսալիությունն ստուգման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է:

Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է ստուգել: Օրինակ՝ լեզուներում, եթե ուզում ենք ստուգել գրելու կամ կարդալու որևէ հմտություն, ապա ընտրված վարժությունը պետք է ստուգի միմիայն այդ հմտությունը: Որպեսզի թեստը հավաստի լինի, պետք է առաջադրանքների տիպերը կամ ձևաչափը ծանոթ լինի սովորողներին:

Թեման ամփոփող աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում թեմատիկ աշխատանքի արդյունքներ վերլուծվում և ամփոփվում են, սակայն չեն գնահատվում միավորով:

Թեմատիկ աշխատանքների արդյունքների ցուցանիշները պայմանավորված են գնահատման մյուս տեսակների՝ հայտորոշիչ և ձևավորող գնահատման արդյունավետ իրականացման ընթացքից և ճիշտ հերթագայումից:

Այդ աշխատանքները կարող են գնահատվել միավորային տարբեր սանդղակներով, բայց պաշտոնական գրանցման համար դրանք պետք է բերել 10-միավորային սանդղակի:

Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել նաև բանավոր, գործնական կամ դրանց համադրմամբ:

Գլուխ 2. Գիտելիքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները և տեսակները

Սովորողների գիտելիքների, կարողությունների ստուգումն ու գնահատումը համարվում է կարևոր կառուցվածքային բաղադրիչ ուսուցման ընթացքում և համակարգայնության, հաջորդականության սկզբունքներին համապատասխան պետք է իրականացվի ուսուցման ողջ ընթացքում:

Գնահատման խնդրի ակտուալությունը կապված է վերջին ժամանակներս ձեռք բերված հաջողությունների հետ՝ ուսուցման գործնական դերի իրականացման առումով, որի շնորհիվ լայնացել է գնահատման բնագավառը, աճել են ուսումնամանկավարժական պրոցեսի նկատմամբ դրական ազդեցության հնարավորությունները, պայմաններ են ստեղծվել գնահատման ռացիոնալացման համար:

Սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատումը համարվում է ուսումնական գործընթացի կարևոր ճյուղ, որի ճիշտ սահմանումից շատ բան է կախված ուսուցման հաջողության համար:[2]

Առանձնացվում են սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման հետևյալ նպատակները՝

-սովորողների գիտելիքների և կարողությունների դիագնոստիկա և շտկում;

-ուսուցման ընթացքի առանձին փուլի արդյունքայնության հաշվում;

-տարբեր մակարդակում ուսուցման արդյունքների սահմանում:

Վերջին տարիների աշխատանքներում մեծ արտացոլում է գտնում ուսուցման արդյունքների գնահատման մշակման համաշխարհային փորձը, այդ թվում արդյունքների թեստավորումն ու մշակումը՝ մանկավարժական չափումների ժամանակակից տեսությունների հիմքում:

Ժամանակակից մանկավարժական թեորեմում և պրակտիկայում հատկապես ակտուալ է սովորողների անձնական ակտիվության զարգացման խնդիրը: Ներկայումս շատ մանկավարժների ուշադրությունը գրավում են պայմանների կազմակերպման հարցերը, որոնց դեպքում ուսուցումը կընթանար առավել հաջող,

[2] Բելեցկայա Վ. Ի. Մանկավարժություն: Մ., 2005թ.

ինչպես նաև հարցեր, որոնք կապված են ուսուցման նկատմամբ սովորողների կայուն դրական մոտեցման ձևավորմամբ, անձնական աճի և գիտակցական հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծմամբ:

Մինչև այժմ շարունակվում են տեսաբան-մանկավարժների փորձերը՝ ստեղծել ուսուցման մեթոդների գիտական համակարգ և մշակել տեխնոլոգիական մոտեցումներ բարձրագույն դպրոցում դրանց կիրառման համար:

Մ. Ա. Դանիլովը և Բ. Պ. Եսիպովը բխել են նրանից, որ եթե ուսուցման մեթոդները ներկայանում են որպես սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման միջոցներ՝ դիդակտիկ նպատակների և գիտակցական խնդիրների լուծման վերաբերյալ, ապա, հետևաբար, նրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

ա. նոր գիտելիքների ձեռքբերման մեթոդներ

բ. կարողությունների և նորարարությունների ձևավորման մեթոդներ՝ գործնականում գիտելիքների ձեռքբերման առումով,

•. գիտելիքների, կարողությունների և նորարարությունների ստուգման և գնահատման մեթոդներ:

Այսպիսով, ուսումնական պրոցեսի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն:

Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունը և կիրառության կարողությունը:

Սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման ձևերը սովորողների գործունեության զանազան տեսակներն են՝ ստուգողական հանձնարարությունների կատարման դեպքում:

Գնահատման ձևերը շատ են, քանի որ յուրաքանչյուր ուսուցիչ իրավասու է հորինել և անցկացնել սեփական, իրենց կարիքով լավագույն, ստուգողական առաջադրանքները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ, որոնք հաջորդում եմ մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել նշված հաջորդականությամբ.

1) հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում:

Այս՝ հայտորոշիչ - ձևավորող - ամփոփիչ շղթան կարելի է անգամ մեկ դասի ընթացքում անել՝ փոքրիկ փուլի մեջ և այդ փուլերը կարող են կարճատև և երկարարտև լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի: Գնահատման տարբեր տեսակների ժամանակ կիրառվում են բազմազան գործիքներ, ընդ որում՝ միևնույն գործիքը կարող է կիրառվել գնահատման բոլոր տեսակների դեպքում:

Որոշ ուսումնական առարկաների, ինչպիսիք են՝ «Տեխնոլոգիան», «ֆիզկուլտուրան», «Շախմատը», «Երաժշտությունը», «Կերպարվեստը» և այլն, ուսումնասիրման ժամանակ, առավել կարևորված է գործնական կիրառությունը: Հետևաբար, այս առարկաներում հայտորոշման համար նպատակահարմար է կիրառել գործնական աշխատանքը:

Օրինակ 1.

2-րդ դասարանում «Շախմատ» առարկայի ուսումնասիրումը. նպատակահարմար է սկսել գործնական աշխատանքի միջոցով հայտորոշիչ գնահատմամբ՝ պարզելու համար, թե երեխաներն ինչ գիտեն առհասարակ շախմատի մասին. արդյո՞ք ճանաչում են շախմատի խաղաքարերը, խաղատախտակը: Ուսուցիչը կարող է երեխաներին առաջարկել ներկայացված խաղաքարերի շարքից առանձնացնել նշված խաղաքարը, անվանել այն, ցույց տալ և բացատրել շախմատի խաղատախտակը և այլն: Այս կերպ՝ ուսուցիչը հնարավորություն է ունենում կարճ ժամանակում, գործնական քայլերի օգնությամբ ճանաչել, բացահայտել երեխաների նախնական գիտելիքների մակարդակը ուսուցանվող թեմայի վերաբերյալ և պլանավորել հետագա աշխատանքները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարողությունների մակարդակը:

Գլուխ 3. Գնահատման գործիքները տարրական դասարաններում

Ուսուցման և ուսումնառության գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի կարողունակության առկա մակարդակի ճիշտ հայտորոշմամբ (դիագնոստիկա), այսինքն՝ անհրաժեշտ է ճիշտ բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները նոր թեմայի կամ ենթաթեմայի վերաբերյալ ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, դասի մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունն ուսուցչինն է: Երբեմն ուսուցիչը կարող է չկողմնորոշվել, թե ուսումնական որ փուլն է ավելի նպատակահարմար հայտորոշել: Բացի այդ, հարկ է նշել, որ անկախ նրանից, թե որպես բովանդակային միավոր որը կընտրի ուսուցիչը՝ թեման, թե ենթաթեման, հայտորոշումն իրականացվում է դասի ընթացքում: Պարզապես բովանդակային փոքր մաս, օրինակ՝ ենթաթեմա, հայտորոշելու համար անհրաժեշտ է տրամադրել դասից ավելի քիչ ժամանակ, իսկ բովանդակային ավելի մեծ միավորի, օրինակ՝ թեմայի, հայտորոշման համար՝ դասի ավելի երկար ժամանակահատված:

Եթե ուսուցիչը պլանավորել է սովորողների հետ ուսումնասիրել որևէ թեմա կամ ենթաթեմա, որպես հայտորոշիչ գնահատման ձև կարող է դասի սկզբում կիրառել օրինակ բանավոր հարցումը՝ դասի թեմայի վերաբերյալ սովորողների նախնական գիտելիքները վեր հանելու նպատակով, որից հետո շարունակել դասը և վերջում իրականացնել ամփոփում: Այստեղից հետևում է, որ դասի ընթացում կիրառվում են գնահատման երեք տեսակները[3]:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայից, թեմայից և սովորողների տարիքային առանձնահատկություններից: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև դասավանդվող նյութի ուսումնասիրման տևողությունը, և դրանից ելնելով՝ընտրել գնահատման տարբեր ձևեր, օրինակ՝ սովորողների նախնական գիտելիքների

[3] Սերգեեվ Վ. Ս. Ուսումնական գործունեության որակի գնահատման ռեյտինգային համակարգ: Բ., 2003թ.

բացահայտման նպատակով կարելի է կիրառել կարճ թեստ՝ 3-4 հարցից բաղկացած:

Ինչպես նաև այս կամ այն թեմայի վերաբերյալ սովորողների ֆոնային գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները պարզելու համար կարելի կիրառել մտքերի տարափ, քարտեզագրում, փոխներգործուն նշանների համակարգ, ԳՈՒՍ, մտածիր-զույգ կազմիր-կիսվիր, 5-րոպեանոց շարադրանք և այլ մեթոդներ: Երբեմն կարող է անհանգստության պատճառ լինել այն հանգամանքը, որ որոշ մեթոդների կիրառումը, օրինակ՝ փոխներգործուն նշանների համակարգ, մտածիր-զույգ կազմիր-կիսվիր, կարող է շատ ժամանակ պահանջել, և ուսուցիչը տարակուսի՝ արդյոք արժե այդքան ժամանակ տրամադրել հայտորոշմանը: Ուսուցիչը հայտորոշման որոշ ձևեր կամ մեթոդներ կարող է կիրառել նաև նախորդ դասի ավարտին՝ ժամանակ շահելով հայտորոշման արդյունքները ամփոփելու և հաջորդ դասը պլանավորելու համար:

Հայտորոշիչ գնահատման համար առաջարկվում են հետևյալ ձևերը.

1. թեստ
2. բանավոր հարցում
3. գրավոր աշխատանք
4. գործնական աշխատանք
5. և այլն

Հայտորոշիչ թեստի հատկորոշիչների օրինակ

Դասարանը՝ 4-րդ

Նպատակը՝ նոր ուսուցանվող թեմայի վերաբերյալ նախնական գիտելիքների վերհանում,

Թեման՝ «Գոյական անուն»,

Առաջադրանքների տիպերը՝ փակ և բաց հարցեր,

Առաջադրանքների բարդության աստիճանը և համամասնությունը՝ պարզ և միջին բարդության,

Առաջադրանքների քանակը՝ 4,

Հատկացվող ժամանակը՝ 10 րոպե:

Ստորև ներկայացվում է թեստի օրինակ՝ ըստ ներկայացված հատկորոշիչների:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

1. Նշվածներից ընդգծի՛ր գոյականները:
   q. սեղան
   r. ուժեղ
   s. ժամացույց
   t. պահարան
   u. քնքուշ
2. Ո՞ր հարցին է պատասխանում գոյականը: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:
   q. Ո՞վ, ովքեր, ի՞նչ, ինչեր
   r. Ինչպիսի՞, որպեսզի՞
   s. Ի՞նչ անել, ի՞նչ լինել
3. Շարունակի՛ր ըստ օրինակի:
   q. ծառ-ծառեր
   r. գրիչ-գրիչներ
   s. մատիտ-
   t. աշակերտ-
4. Նշված բառերը դասակարգի՛ր անձ և իր ցույց տվող գոյականների:

Ուսուցչուհի, նստարան, սեղան, օդաչու, տուն, մարդ, գլխարկ, բժշկուհի, հայելի, մկրատ, վարսահարդար:

- Կատարել սովորողների կողմից լրացված թեստի արդյունքների վերլուծություն:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

- 1) գրավոր կարճ հարցում (թեստ)
- 2) բանավոր հարցում
- 3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)
- 4) գործնական աշխատանք
- 5) տնային աշխատանք
- 6) թղթապանակ
- 7) նախագծային աշխատանք և այլն:

Այսպիսով, չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:

Եզրակացություն

Այսպիսով, ստուգման անցկացման ճիշտ մեթոդիկան դրդում է սովորողներին ուսումնասիրել առավել մեծ քանակությամբ ինֆորմացիա և ինքնակատարելագործվել: Միևնույն ժամանակ մասնագիտական մանկավարժական գործունեության վերաբերյալ գիտելիքներն ու ստեղծագործական իրականացումը թույլ են տալիս հաջող կերպով լուծել ուսումնական խնդիրները և հասնել սահմանված կրթական նպատակներին:

Ուսումնական աշխատանքի համակարգում պետք է իրենց կիրառումը գտնեն գիտելիքների ստուգման և գնահատման բոլոր վերոնշյալ մեթոդները, որպեսզի ապահովեն ստուգման անհրաժեշտ համակարգանությունը և խորությունը սովորողների հաջողության որակի առումով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անտրոպովա Մ. Վ. Մանկավարժություն: Մ., 2008թ.
2. Բելեցկայա Վ. Ի. Մանկավարժություն: Մ., 2005թ.
3. Սերգեեվ Վ. Ս. Ուսումնական գործունեության որակի գնահատման ռեյտինգային համակարգ: Բ., 2003թ.
4. Սմիրնով Ս. Դ. Մանկավարժություն և հոգեբանություն: Մ., 2003թ.